ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

**ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

**GENERAL SECRETARY**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: 58 02 42 , ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@edu.am, www.edu.am

N 04/23/20786-19 24 09 2019թ.

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնի**
**նախագահ Շուշան Դոյդոյանին**
/հասցե՝ Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
էլ.հասցե՝ foi@foi.am/

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարին ուղղված Ձեր գրության՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ է հանդիսանում հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Կամավոսյանը /հեռ.՝ 52 67 13, 041 66 03 58, էլ.փոստ՝ info@edu.am/:

«Օֆելյա Կամավոսյանին տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու» և «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 817-Ա, ՀՀ մշակույթի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 667-Ա և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 126-Ա/5 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանները տեղադրված են նախարարության կայքում հետևյալ հղումներով՝ https://bit.ly/2I0EM9R, https://bit.ly/2mskN49

Կից՝ իրավական ակտի պատճենը:

Հարգանքով՝

23.09.2019

X

ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN NAIRI 1503760081 Ն. Հարությունյան

Կատ.՝ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն
Հեռ.՝ 52-73-432

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 608-Ա

«20» սեպտեմբերի 2019

## ՕՖԵԼՅԱ ԿԱՄԱՎՈՍՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 13-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1204-Ն որոշմամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Օֆելյա Կամավոսյանին նշանակել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձ:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378